ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Վարդենիս** **20/06/2024**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Արմինե Աղաջանյանը, Արուսյակ Ավետիսյանը, Սպարտակ Հովհաննիսյանը, Արման Մաթևոսյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Սեվակ Սիմոնյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Աիարոն Խաչատրյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը**

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ. <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Վարդենիս համայնքի ավագանին **որոշում է**.

1. Վարդենիս համայնքի ավագանու 28 դեկտեմբերի 2023 թվականի N 173-Ա որոշման բովանդակության մեջ կատարել լրացում

1.1)Ներկայացվող ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմում է 185.144.200 ՀՀ դրամ:

1.2)Ծրագրերը ներկայացնել համաձայն կից հավելվածների:

1.3)Ավելացնել ևս 2 ծրագրային առաջարկ (հավելված):

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը:

Առաջարկություններ և առարկություններ չեղան:

20 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2024 թվականի հունիսի 20-ին, ժամը 12:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած 1 հարցից.

1. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ. <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հունիսի 20-ին ժամը 12:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 20-ը, բացակայում էին <<Քաղաքացիական պայմանագիր խմբակցության>> ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը, Արմինե Աղաջանյանը, Սևակ Սիմոնյանը, <<Ահարոն Խաչատրյան խմբակցության>>ավագանու անդամներ Արման Մաթևոսյանը, Արույակ Ավետիսյանը և Սպարտակ Հովհաննիսյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Նիստին մասնակցում էին աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, քաղաքաշինության հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Աբգար Աբգարյանը, համայնքի ղեկավարի օգնական Ա. Եղիազարյանը և այլ անձինք: Համայնքի ղեկավարը ներկայացրեց օրակարգ, 1 հարցից այնուհետև օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Ավագանու անդամներ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱԶՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՋԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՔԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ______________

*Նիստն արձանագրեց՝* Կամո Զարոյան ______________